

LGN

✓
1034

1999 1 7

Հ Ա Յ Ո Յ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵ-
ՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՆՈՐԱ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՈՏ

ԾՐԱԳԻՐԸ



264



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ԹՈՎՍՈՒ ԳԱՐԴԱՆԵՆՆՅՈՒՆ ԵՒ ԸՆԿ.

1882




8080

ՏԻՖԼԻՍԻ ՄԱՐԿԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆԻՆՍԻ ՊՐԻՆՏԵՐՆԻ

48

Доз. Цензурою Тифлисъ, 19 Августа 1881 г.



Тип. М. Варганянца и К-°Троицкіи пер. д. №11

71034-60

28 1034



Ա.

Բարեկամ,

Անհերքելի է, որ Հայ ազգը գոյութեան հռուի մէջ տոկուն ազգ է. դորան ապացոյց՝ նորա աւելի քան չորս հազար տարուայ կեանքը: Հայի հետ մի ժամանակ ըսկիզբն առած բոլոր ազգերը կամ իսպառ ջնջուած են աշխարհիս երեսից եւ կամ շատ շատ՝ նոցանից մնացած են այնքան մի սակաւաթիւ եւ թշուառ մնացորդներ: որք գրեթէ չգոյութեան են հաւասար: Իսկ Հայը՝ ո՛չ եթէ միայն դեռ կանգուն է այսօր, այլ եւ յառաջադիմութեան շաւղի մէջ մրտած, թէ եւ փոքրիկ՝ բայց հաստատ քայլեր է փոխում:

Հայի այդ անօրինակ տոկոնութեան գաղտնիքը՝ նորա մի անգամ ընդունած համոզ-

մունքի անդրդուելի հաստատութեան մէջն է ծածկուած. դորա համար պատմութեան մէջ ունինք շատ օրինակներ: Եւ այդ է պատճառը, որ մինչեւ այսօր էլ դեռ Հայի մեծամասնութիւնը պինդ կպած ապրում է իւր փապերի հողի վերայ, անբախտելի կերպով կապուած է իւր եկեղեցւոյ հետ, որպէս իւր գոյութեան ամենահզօր նեցուկի հետ, անբաժան է իւր մայրենի լեզուից եւ դեռ անջինջ պահպանում է տասնեակ դարեր առաջ ծնունդ առած եւ պապերից—սատերից իւրեան աւանդուած սովորութիւնները, աւանդութիւնները, առասպելները, նախապաշարմունքները, առածները եւ այլն:

Գովելի է, այն, հայի անդրդուելիութիւնը իւր համոզմունքի մէջ, բայց եւ ցաւալի է շատ, որ այդ գեղեցիկ յատկութեան շնորհիւ նա իւրեան սեպհականացրել, ասես, մարմին եւ արիւն է դարձրել, եւ այնպիսի պակասութիւններ, (եւ այդ անշուշտ օտար եկամուտ ազգերի հետ ունեցած փոխադարձ տարապայման յարաբերութիւնների պատճառաւ) որք տասնեակ դարերի ընթացքում չարաբաստիկ հանգամանքներից աւելի եւ աւելի աճելով եւ ճիւղաւորուելով այնքան խորարմատ եւ հաստաբուն են դարձել, որ

դարեր են հարկաւոր նոցա արմատախիլ անելու համար: Այդ պակասութիւնները կապում կաշկանդում են հայի յառաջագիւմութեան քայլերը եւ մահու հարուածներ են տալիս նորա գոյութեան ամբողջ կազմուածքին:

Այդ պակասութիւններից գլխաւորն է ընկերի վերայ անգաբահումներ, որից յառաջ է գալիս ընկերական ոգոյ քայտկայտները (անմիաբանութիւն), իսկ այս վերջինից հանրաշահ գործերում առանցական դերքերն էլ, այն է՝ անձնական շահույց սահմանից դուրս չգալը, ինքը իւրեան համար միայն լինելը, Հայը անխտաճ է, բայց յանձնապաստան է, ընկերական ոգի չունի, բայց իւր սեպհական սյփը ընկերական միացեալ ամեն ոյժից աւելի մեծ կերեւակայի, հայը գործով միմիայն իւր գլխի համար մտածող ու գործող է, իսկ լեզուով՝ ընդհանուրի շահը հրապարակում միշտ բարձրաբարբառ բարոզող:

Ազգային պատմութեան էջերը լի են հայի այդ հակամարդկային ախտերից պատճառուած ողբալի տեսարաններով եւ ոճիրներով, բայց մենք, շնայելով Էբրկայ լուսաւորեալ դարի բարերար ազդեցութեանը, դեռ դարձեալ կուրօրէն, ասես կամաւ, անձնատուր

ենք լինում նոցա: Զարմանալի ազգ չե՞նք:

Մի քաղաքում, օրինակ, սկսվում է նուիրատուութեան հանդանակութիւն, դիցուք Հէնց՝ մի սոցալոց կամ օրիորդաց դպրոց բանալու համար: Հասարակութիւնից ոմանք ստորագրվում են, իսկ միւսները՝ ո՛չ: Ինչո՞ւ, որովհետեւ առաջինները ունին կարգալուհասած զաւակներ, իսկ վերջինները կամ զաւակներ չունին եւ կամ դեռ շատ փոքր են նոքա: Անցնում են միքանի տարիներ եւ ահա՛ դերերը փոփոխվում են. առաջինները դադարեցնում են իւրեանց նուիրատուութիւնները, իսկ վերջինները նոր սկսում են նուէրներ տալ. ինչո՞ւ, որովհետեւ նոցա զաւակները արդէն աւարտեցին իւրեանց ուսումը եւ դուրս եկան դպրոցից, իսկ սոցա՛ զաւակները դեռ նոր են հասել կարգալուհասակին:

Այսպիսի վարմունքի եւ սորանից յառաջացող վնասակար հետեւանքի մասին, բարեկամ, դուք ինքներդ դատեցէք եւ տուէք դատաւիճիւ, ես լռում եմ:

Մտեանանք մեր բուն նպատակին:

Սակայն ի վերայ այս ամենայնի մխիթարական է տեսնել, թէ ինչպէս դարուս սկզբից ուսման եւ կրթութեան շնորհիւ տեղ տեղ երեւիլ սկսան մեր ազգի մէջ նախ՝ որ-

պէս բացառութիւնք, մի քանի անհատներ, իսկ այս վերջին տասնեակ տարիներում՝ աւելի մեծ թուով բարեկիրթ եւ զարգացած հայազգիք, որք, դուրս գալով իւրեանց աւանդական նեղ ~~աւանդական~~ դիպից, սկսեցին մտածել եւ ընդհանուրի վերայ: Սոքա հիմնեցին ազգային դպրոցներ, ներշնչեցին իւրեանց մատաղ սաների անարատ հոգումէջ ընկերական «գի», եւ ահա՛ փոքր առ փոքր սկսաւ վերականգնիլ ~~կարգալու~~ իւրեն:

Տարուէ տարի բազմացող եւ բարեկարգուող արական դպրոցների թուին վերայ աւելացան հետզհետէ եւ իգական դպրոցները, եւ սկսեցին այնուհետեւ քոյր ու եղբայր ձեռք ձեռքի տուած աւելի եռանդով զուգընթաց յառաջ դիմել: Իսկ ժամանակի հոսանքի հետ ընթացող եւ օրինաւոր կերպարանք ստացող հայ պարբերական հրատարակութիւնները բարեխիղճ առաջնորդի եւ հմուտ ու խոհեմ դաստիարակի ամենածանր պատասխանատուութեան դժուար դերը ստանձնեցին: Նոքա անխնայ մտրակիցին ամենայն հասարակական ախտեր, դիմագրաւեցին ազգային իրաւանց նեքին եւ արժաքին յարձակումներին, մշակեցին հին եւ նոր հարցեր, ձգնեցին ստեղծել հասարակական կարծիքի կմախքը, ուղղութիւն

տլին ազգային բոլոր հիմնարկութիւններին եւ նոցա ազնիւ եւ օգտակար գաղափարը ընդհանրացրին ազգի մէջ:

Այսպէս ահա հարթուեցաւ ու պատրաստուեցաւ յայն ճանապարհը այն հզօր եւ բազմադղին հիմնարկութիւններին համար, որք իբրեւ բնական հետեւանք զարգացման, անմիջապէս պիտի յաջորդէին սորան. այդ հիմնարկութիւնները ազգային բարենպատակ ընկերութիւններն էին:

Բարեկամ ինչպէս նկատում էք, ընկերութիւններ ծնունդ առնելու համար, մեծամեծ երկունքներ էին հարկաւոր. մեծ բանի երկունքը միշտ մեծ է լինում: Մեր խօսքը, իհարկ է, մանր մունր ընկերութիւնների վերայ չէ, որք այլ եւ այլ ժամանակ, մանաւանդ տաճկահայոց մէջ, գրեթէ առանց մի զգալի երկունքի, գիտաւոր աստղի նման յանկարծ երեւեցան եւ նոյնպէս յանկարծ անհետացան: Դո՞քա նոյնպէս նման էլ չեն մի որ եւ է դպրոցի, լրագրի կամ մի այլ այդպիսի հիմնարկութեան, որին կարող է ձեռնարկել եւ ըստ կարի յաջողութեամբ յառաջ տանել մի գործին հմուտ եւ տոկուն մարդ: Ընկերութեանց համար անհրաժեշտ էին հարիւրաւոր մտածող եւ գործող գլուխներ, որք տասնեակ տարիների ըն-

թացքում անխոնջ աշխատութեամբ վերջապէս յաջողացնէին խորտակել դարերով արմատացած անհասական մեկուսացալ դիրքը, ստեղծել ընկերական ոգի եւ վերականգնել լսարանները: Այդ ընդհանուր նպատակի համար պէտք է համերաշխ գործէին եւ դպրոցը, եւ լրագրութիւնը, եւ թատրոնը, եւ գրականութիւնը:

Այսպէս ահա սկիզբն առան եւ հետզհետէ բազմացան մեր մէջ զանազան բարեգործական, մարդասիրական, դպրոցասիրական, ուսումնասիրական, թատրոնական, գրատպական ընկերութիւններ, նոյնպէս եւ մասնաժողովներ գաղթականաց եւ սովելոց: Հայուհին եւս, յետ մնալ չուզելով իւր եղբայրներից, ինքն եւս կազմեց ազգանուէր եւ դպրոցասէր հայուհեաց ընկերութիւններ:

Հայուհի, քո աջակցութիւնը անհրաժեշտ եւ անցին է եղբորդ համար ամեն մի ազգային գործում: Դու քնքոյշ ես, դու թոյլ ես, մի՛ գործիր անգամ ոչինչ. միայն մի՛ թողուր նորան մեայնակ, մի՛ հեռանար նորանից եւ ո՛չ մի քայլ, քաջալերի՛ր եղբորդ քո ներկայութեամբ, ոգի՛ ներշնչիր նորան եւ այդ բաւական է. նա կ'առիւծանայ եւ քաջի պէս կ'գործի թէ՛ իւր եւ թէ՛ քո փոխարէն:

Բ.

Առեւտրական գործում հայի վստահութիւնը անկման այն կէտին չէր հասած, որ հարկաւոր ինէր շտապել շուտով վերականգնել զայն: Հայը որպէս շահախնդիր ազգ, միշտ հակամէտ է եղած դէպի վաճառականութիւն. եւ այդ է պատճառը, որ մինչեւ այսօր իսկ հազարաւոր հայեր դեռ դեգերում են Գանգէսի ափերում եւ Սունդեան կղզիներում հրապուրիչ փայլուն ոսկի ձեռք բերելու համար: Հայը, եթէ հնար ունենար, լուսինն էլ կերթար աւելի ոսկի դիզելու յուտով. բաց ափսո՛ս, որ լոկ դիզելու, այլ ո՛չ դիզածն ըստ արժանոյն գործադրելու նպատակով: Օրինակներ՞, ո՛չ առանց բացատրութեան, հազարաւոր:

Բնական էր, ուրեմն, որ առեւտրական ընկերութիւններ կազմելու գաղափարը շատ վաղ եւ առանց դորա համար առանձին զարգացման կարօտութեան, այսպէս անած, ինքնաբերաբար զարթնէր մեզանում: Եւ յիշաւի, եղած են եւ այժմ եւս կան մեր մէջ բազմաթիւ առեւտրական ընկերութիւններ, բայց, դժբաղտաբար, մեծ մասը աննշան եւ զուրկ որոշ ծրագրից եւ կանոնաւոր հաշուապահութիւնից, Բայց այդ ձեւի

ընկերութիւններով եւ հին հռովմայական սոսկ ել եւ մտից մատեաններով, մեր լեզուով ստած, եւ ասի, եւ ասի՛ւ շատ յառաջ չեն կարող գնալ մերայինք, եթէ չստանան մանաւանդ, թէ դեռ շատ էլ յետ կմնան: Մի՞թէ սորա համար դեռ ապացոյցներ եւ փաստեր են հարկաւոր, մինչդեռ մեր աչքի առաջ ունինք անթիւ կենդանի օրինակներ: Մի ընդհանուր հայեացք: Երեկուայ հայ գիւղացի պատանին այսօր տանու ծառայ եւ ապա խանութի աշակերտ է մի հայ վաճառականի մօտ, վաղը նա մանրալստճառ է, միւս օրը իբր վաճառական, իսկ չորրորդ օրը արդէն մի ամենաթշուառ սնանկ: Սա մի սրտապատառ ողբերգութիւն է չորս արարուածով: Եւ ինչո՞ւ այսպէս. ահա՛ ինչու եւ ինչպէս: Քսնի որ հայ վաճառականացու է դեռ աշակերտ կամ մանրալստճառ է, գործը յաջող է, որովհետեւ նորա մտաւոր կարողութեան չափը տակաւին համապատասխանում է իւր առեւտրական շրջանակութեան սահմանին, նա մինչեւ անգամ առանց որ եւ է հաշուապահութեան, հէնց իւր բնական յիշողութեամբ, կարող է ղեկավարել իւր գործերը: Բայց երբ նա ընդարձակում է իւր առեւտրական շրջանակութեանց սահման-

ները (վաճառականն է դառնում), այն ժամանակ նորա օր ըստ օրէ աւելի եւ աւելի բարդուող գործերը սկսում են շփութել նորան: Նորա ըմբռնողական ոյժը այլ եւս չէ կարողանում գրկել իւր գործերի բոլոր ընդարձակութիւնը, նա մտրտւում է, կորցնում է գործի դեկը եւ այնուհետեւ սկսում է շարունակել իւր գործերը ո՛չ այլ եւս գիտակցաբար, այլ բնագգաբար: Այդ օրից ահա նա ակամայ խոնհասւում է անողորմ ճակատագրի առաջ եւ նորան է յանձնում իւր գոյքն ու գործերի յաջող ընթացքը— իւր ապագայ բաղդը:

Պարզ է, որ գործերի այդպիսի անբնական ընթացքը նորան ուղղակի դէպի կորուստ պիտի տանի: Եւ յիրաւի, թոյլ հիմքերի վերայ (այբ—ժէ—ճէ—ու. ահա հիմքը) բարձրացրած այդ հսկայ աշտարակը սկսում է տատանիլ, ամենքը գուշակում են նորա անփախչիլի մօտալուտ անկումը: մերձաւորները խոյս են տալիս նորանից, որ մի գուցէ ջախջախուեն նորա սոսկալի բեկորների տակ: Իսկ բաղդի խազալիկ դարձած վաճառականի ճարպիկ, դանակները սրած եւ տիրոջը պէս դեռ չբթացած գործակատարները (թէ եւ նոյնպէս անուս եւ անկերթ), օգուտ քաղելով այդ բարեպատեհ

հանգամանքից, շատ անգամ, այնքան բարի են լինում որ չեն էլ թողնում իւրեանց հօրից աւելի երախտաւոր փրօջը երկար հոգեւտաքով տանջուի իզուր, այլ որչափ հնարաւոր է, շտապացնում են այդ վիթխարի մարմնի արագ քայքայումը եւ ահաւոր կործանումը: Տիրօջ դերը իւրեանց վերայ են առնում գործակատարները, եւ այդպէս յաջորդաբար շարունակվում են այդ տխուր տեսարանները:

Անկենդան հայ վաճառականութեան շունչ տալու համար՝ անշուշտ պէտք է կազմել մեր մէջ եւրոպական ձեւով օրինաւոր կազմակերպութիւններ: Եւստիանոս Բիւնիսեր:

Արդեօք հարկաւոր է ասել թէ որչափ զօրաւոր եւ գրեթէ ամենայաղթ է ընկերական միացեալ ոյժը որպիսի եւ է ձեռնարկութիւն յաջողութեամբ պսակելու համար: Այն՝ ինչ որ կդժուարանայ անել մի հզօր պետութիւն, այն կանի ընկերութիւնը: Աշխարհիս վերայ կատարուող բոլոր հսկայական ձեռնարկութիւնները լինում են ընկերութիւնների միջոցաւ. ամենայն անյաղթելի—դժուար համարուած գործեր, իբրեւ ձիւն արեգակից, հարվում, խոնարհվում են ընկերութեանց անընկճելի ոյժի առաջ:

Ո՞վ պատեց երկրագունդը հեռագրական

լարերով, եթէ ոչ ընկերութիւնը, ո՞վ ծածկեց Եւրոպան եւ Ամերիկան քան սարդի ոստայն աւելի բարդ. երկաթուղու անթիւ ցանցերով, եթէ ոչ ընկերութիւնը, ո՞վ միացրեց Միջերկրական եւ Կարմիր ծովերը հրակայական-ջրանցքով, եթէ ոչ դարձեալ ընկերութիւնը, ո՞վ համասփռեց ծովերի եւ ովկիանոսների երեսը անհամար նաւերը եւ շոգենաւերը, եթէ ոչ ընկերութիւնը, ո՞վ է ծակում այսօր Սէն—Գոթարդի երկաթուղոյ վեթիսարի ականը, եթէ ոչ դարձեալ ընկերութիւնը եւ այլն: Եւ եթէ այսօր կամենում են Ատլանտեան եւ Խաղաղ ովկիանոսները միացնել, Փանամայի պարանոցով, ո՞վ է փշրում արդեօք Քորդիլեան լեռնաշղթան եւ կամ եթէ կամենան, ինչպէս արդէն մտադրութիւն եւս կայ, Ծրանսիոյ ծովափը ծովի տակի տակնով միացնել Անգլիոյ ծովափի հետ, ո՞վ պիտի փորի արդեօք այդ ոսկալիթիսար ականը, եթէ ոչ դարձեալ ընկերութիւնը: Եթէ աշխարհիս մեծամեծ տէրութիւններն անգամ իւրեանց թող են զգում ընկերութեանց ոյժի առաջ եւ կարօտում են նոցա օգնութեանը ամեն դժուար ձեռնարկութիւնների մէջ, ապա ուրեմն մենք, հայերս, որ ամեն բանից գուրկ ազգ ենք եւ մեր բոլոր յոյսը միայն մեզ վե-

րայ ենք դրած, ո՞րչափ արդեօք աւելի մեծ կարօտութիւն զգալու ենք մեր մէջ կանոնաւոր ընկերութիւնների կազմուելուն եւ նոցա մեզ աջակցելուն:

Գ.

Արհեստագիտական ընկերութիւններ, այդ բառի բուն նշանակութեամբ, թէ եւ չեն եղած եւ չկան մեզանում: սակայն դոցա շատ հեռաւոր նմանութիւնն ունեցող կազմակերպութիւններ վաղ ժամանակից արդէն գոյութիւն ստացած են: մեր մէջ որք այժմ եւս հասնալու ենք անունով շարունակվում են առանց գրեթէ մի զգալի յառաջագիմութեան եւ կատարելագործութեան: Միայն Կ. Պոլսոյ մէջ բաւական ժամանակէ ի վեր կայ մի հայ արհեստասիրաց ընկերութիւն, որի գործունէութեան սահմանը ոչ եթէ միայն չէ անցել Բոսֆորից, այլ եւ նորա այդ սահմանի մէջ գործածն անգամ (եթէ միայն գործել է) յայտնի չէ ազգի ընդհանրութեանը: Սակայն իշնորհս մեր կողմերը գաղթած Եւրոպացի արհեստագէտների մեր արհեստաւոր գասը մասամբ դուրս է եկել իւր նահապետական դիրքից, այնպէս որ այսօր Կովկասի բոլոր հայաբնակ քաղաքնե-

րում եւ գիւղաքաղաքներում մինչեւ ան-
գամ: կարելի է տեսնել պատուական հայ
կօշիկակարներ, դերձակներ, ստիրիչներ,
հիւսներ, երկաթագործներ, ոսկերչներ, ժա-
մագործներ, յուսանկարիչներ եւ այլն: Միայն
գեղարուեստից մէջ, հանճարների բացառու-
թեամբ, համեմատաբար շատ յետ են մնա-
ցել հայք, եւ այդ սյն պատճառով որ գո-
րանից մի նշանաւոր շոշափելի շահ չէր
կարելի սպասել, ինկատի ունելով նորա ան-
գործագրելիութիւնը մեր երկրում: Գեղա-
րուեստը աւելի գաղափարական եւ ապառիկ
գործ է, բայց հայը միշտ սիրում է գործ-
նական եւ կանխիկ (նազդ) պարապմունք:
Ուրեմն, եթէ մերայինք մի քանի յառա-
ջագիմական թոյլ քայլեր են արել արհես-
տագիտութեան մէջ, ինչպէս վերեւ ասա-
ցինք, այդ ո՛չ թէ մեր գորա համար առան-
ձին հոգածութեան եւ մտածուած նախա-
տեսութեան շնորհիւ են արել, այլ բոլորո-
վին բնազդաբար միմեանց օրինակին հետե-
ւելով, դա մի տեսակ ինքնաբոյս բան է *):

*) Տեղական արհեստներից Գիւղաքաղաքային կատարե-
լագործուած են միայն մետաքսեայ թելի գործարան-
ները, որոնցից ամենանշանաւորներն են Օրդուբա-
թինը, Արարաբաղինը, Նուխուլնը եւ Ներքին—Ա.
գուլիսինը:

Ժամանակ է մտածել եւ արհեստագիտա-
կան ընկերութիւններ կազմելու համար: Մի՞թէ
օգտակար չէ՞ր լինի եթէ մի արհեստասի-
րաց ընկերութիւն, օրինակ, ձեռնարկէր բա-
նալ Ղարաբաղում գորգ—կապերտի մի գոր-
ծարան, ուր աշխատանքի բաժանմունքնե-
րով մասնագիտաբար գործէին գաւառի
ամենահմուտ վարպետները. որով թէ՛ այդ
գործուածքները կկատարելագործուէին եւ
կազնուանային եւ թէ՛ նիւթական մեծ շահ
կարող էր ստանալ ընկերութիւնը: Նոյնպիսի
մի գործարան էլ չէ՞ր կարելի մի՞թէ բանալ
նա եւ Դաղստանում տեսակ տեսակ ազնիւ
եւ թանկագին շալեր պատրաստելու համար:
Դոցանով կբաղդաւորուէին նաեւ հարիւրա-
ւոր ընտանիքներ, որք կպարապէին այդ գոր-
ծարաններում: Մեզ անհրաժեշտ է մշակել
տեղական բերքերը եւ կատարելագործել մեր
պապական արհեստները եւ դոցա արդիւ-
նաւոր հետեւանքից միայն սպասել մեր ա-
պագայ ճշմարիտ բարօրութիւնը, թէ՛ ո՛չ,
ըստ տեսակի եւ ըստ քանակութեան օր ըստ
օրէ աճող արտասահմանեան ապրանաջ ներ-
մուծութիւնը՝ վերջապէս մի գեղեցիկ օր
խապառ կխեղդի մեզ: Դա մեր կողմից մի
տեսակ դանդաղ, բայց անողորմ անձնա-
օպանութիւն է:

198

Հայր չունի սրտոտութիւն (РИСКЪ) ասած քանը. նորա համար առաջին նոր քայլ անելը՝ մահ է կատարեալ. այդպիսի դիպուածում նորա սիրտը դողում է որպէս աշնան տերեւ, ծունկերը թուլանում են, ասես՝ գետինը փախչում լինի նորա ոտների տակից, նա ոտքի վերայ կանգնել չէ կարող: Նա առաջին քայլը միշտ իւր ընկերին է առաջարկում: որ եթէ վտանգ էլ պատահելու լինի՝ գոնէ նորան պատահի ու ինքն ազատուի: Նա մինչեւ իւր աչքերովը չտեսնի շօտփելի օրինակը, երբէք ոչ մի բանի չի հետեւիլ նա: Բարեկամ ի՞նչ կլինէր: եթէ մենք մի փոքր քաջասրտութիւն ունենայինք, ասացէ՛ք խնդրեմ: ի՞նչ մի մեծ կորուստ էր մեզ հազար, եթէ համար հոգի մարդագլուխ 50 բուբլ վեր գալով ընկերանայինք այսպէս ասած կորցնէինք, այն 50 բուբլը, որը իւրաքանչիւրը մեզանից ամեն տարի վատնում է փուչ բաների առանց ամենեւին փսոսալու: Փորձենք: գուցէ չենք էլ կորցնում: այլ մանաւանդ դեռ շահվում էլ ենք. բանանք շալերի կամ գորգ—կապերտի մի գործարան այդ 50, 000 դրամադիւրովը եւ յանձնենք նորա կառավարութիւնը, մեզանից բնարուած ազնիւ գործունեայ եւ մեր բոլոր ստուգութեանք

արժանի գործադիր ժողովին ու թող գործի. իսկ մենք իւրաքանչիւրս դարձեալ գնանք մեր բան ու գործին, Ա՛ստուած—Աստուած, ի՞նչ կլինի—կլինի:

Բնագէտ—մաթէմատիկոս Արքիմէդէսը ասաց. «Տուէք ինձ յենակէտ եւ իմ ցանկացած լծակը, ես կբարձրացնեմ հրկիրը.» քայց ես կասեմ. «Տուէք ինձ 1000 հոգի, որոց ամեն մէկը տարեկան առանց վերան թուացնելու 50 բուբլ զոհել կարողանար, ես Նովկասը կերպարանափոխ կանեմ այնպէս՝ որ մի քառորդ դարից յետոյ չէք կարող ճանաչել նորան.» Արքիմէդէս անհնարին էր պահանջում: քայց ես հնարաւորն ու անհրաժեշտն եմ առաջարկում:

7.

Ժողովրդական դասակարգերի այն բաց որոշ բաժանմունքը, կոսպայտլան համակարգութիւնը, որը դեռ այսօր եւս գոյութիւն ունի Հնդկաստանում եւ կար մանաւանդ աւելի խիստ անանցանելի սահմանով հին դարերում եգիպտոսի մէջ, չի եղել եւ չկայ մեր ազգի մէջ: Միայն քուրմերի մի դասակարգ ենք ունեցել, ինչպէս Ղեւտականները Հրէից մէջ, այն էլ մի քանի դար տեւողութեամբ

միայն, որը սկսուել է Հայոց Վահագն դիւ-
ցազն թագաւորի սերունդից, Վահունիք
անունով, եւ վերջացել է Հայոց Տիգրան Բ.
Թագաւորի ժամանակ:

Բայց ի՞նչ կասէիք, բարեկամ, եթէ ասէի՝
թէ այժմեան Հայերս, թէ եւ բնաւ ո՛չ դիտ-
մամբ, բայց եւ այնպէս՝ այն տեսակ խոր-
թացած դիրք ենք բռնած, որը ո՛չ եթէ
միայն շատ նման է կաստայական համա-
կարգութեանը, այլ եւ նորանից տասնա-
պատիկ աւելի կորստաբեր է այդ մեր հո-
ղագործ (գիւղատնտես) դասի համար:
Տեսէ՛ք:

Մեր ազգը կազմող ամենամեծ դասակարգը
գիւղատնտեսութեամբ պարապող դասն է:
Այսօրուայ գիւղացին ազատ է վաղը դառ-
նալ արհեստագործ, վաճառական, ոստ-
մանական, արգելք ամենեւին չկայ: Բայց
տեսած էք երբէք, որ արհեստաւորը, վա-
ճառականը, ուսումնականը կամ հոգեւո-
րականը վերադառնայ եւ մտնի այն դա-
սակարգի ծոցը, (հողագործ դասի) որից
ծնունդ էր առել նա: Թէպէտ օրէնքով ար-
գելուած չէ այդ անել, բայց որ գիւղացին
մի անգամ դուրս է գալիս իւր շրջանից
եւ մտնում է մի այլ դասակարգի մէջ, է՛լ
բաւական է, պրծա՛ւ. այնուհետեւ նա ո՛չ

մի պայմանով էլ չէ կամենում վերադառ-
նալ իւր նախկին պարապմունքին: Ա՛յ այդ-
չափ միայն, նա մինչեւ անգամ կարմրում
է ինքն իրան, երբ յիշում է՝ որ գիւղացու
որդի է. հարցրած ժամանակն էլ, եթէ
շապիկ մաշուելով, ամօթու ծածկում է իւր
գիւղացի լինելը եւ նոյն գիւղի գաւառա-
կան կամ նահանգական քաղաքի բնակիչ է
անուանում իւրեան: Իւրեացի՛ կոչուելի՛ ո՛հ,
դա աւելի՛ վատթար է, քան Հնդկաստանցի
պարսի լինել:

Աստուած իմ, տէսէք ի՛նչ ամենաստոր
անարգական կէտից ենք նայում մեր երե-
ւակայական փառաց բարձրութիւնից ամե-
նայն գթութեան արժանի այն դասակարգի
վերայ, որի դառը քրտնքի վաստակովն ենք
ապրում եւ որին վիճակուած է անողոք
ճակատագրից տանել ամբողջ կեանքում մի
ամենածանր եւ տաժանելի լուծ:

Սակայն արդարապէս դատելով՝ բոլորո-
վին արդարացի էլ չէ պահանջելը, որ նոքա
անպատճառ վերադառնան մտնեն իւրեանց
նախկին դասակարգի մէջ. նախ՝ որ փոխուած
հանգամանքները կարող էին թոյլ չտալ
նոցա այդ անելու, եւ երկրորդ՝ զո՞յշ, դա
կգիպէ՛ր ազատութեան վե՛հ սկզբունքին, որը
առաջին Աստուածաշնորհ արտօնութիւնն

է եւ մարդկային բարոյական կեանքի ամենա-
 սրբազան պայմանը: Միայն թէ նոքա, այդ
 բաղդաւորները, թող օգուտ քաղելով իւր-
 եանց բարձր դիրքից, որը խորհրդով, որը
 գործով, որը փողով, որը բարոյական խրատ-
 ներով եւ հոգեւոր մխիթարութիւններով
 օգնէին իւրեանց գիւղումը թողած անբաղդ
 եղբայրներին եւ քոյրերին եւ ամօքէին նոցա
 կեանքի դառնութիւնը: Բայց ո՛չ, նոքա ո՛չ
 եթէ միայն այդպէս չեն վարվում, այլ,
 ընդհակառակը, գտնվում են այնպիսի
 բարեհոգիներ, որք արհեստաւոր դառնա-
 լով իւրեանց առաջին անյաջող փորձերը
 հէնց իւրեանց համագիւղացիների գլխին
 են կատարում: Վաճառական դառնալով
 անխնայ հարստահարում են նոցա քրդից
 աւելի վատթար, ուսումնական (աստիճա-
 նաւոր) գառնալով՝ ոլիմպիական բարձրու-
 թիւնից արհամարհում եւ կաշառառու-
 թեամբ անողորմաբար կեղեքում են նոցա եւ
 վերջապէս հոգեւորական դառնալով՝ կեան-
 քի բոլոր երկար ընթացքումը տղրուկի պէս
 շարունակ ծծում են նոցա մնացած վերջին
 գրամական ոյժերը: Մէ՛կը չկայ, որ այս
 ամենի հետ, գոնէ մի փոքր էլ նոցա շահի
 եւ ապահովութեան համար մտածի ու գոր-
 հի. ամենք էլ մի մի ցեղ ու պատիժ են

դառնում խեղճ գիւղացու համար եւ ամեն
 կողմից քրքրում մաշում են նոցա առանց
 այն էլ արդէն հալ ու մաշ սիրտն ու հոգին:
 Այս մեր դէպ իգիւլատնտես դասը բռնած
 դիրքը թէ կաստայական չէ՝ բա ի՞նչ է.
 մի՞թէ անպատճառ օրէնքով սահմանուած
 պէտք է լինէր, որ Վաստա կոչուէր. թէ
 կաստա չէ, գոնէ դորա մի ամենալատթար
 տեսակն է: Եւ մի՞թէ այսպիսով օր ըստ օրէ
 նուազեցնելով այդ դասակարգի թարմ ու-
 ժերի թիւը, եւ միւս կողմից Փարս-Օն-Բի-Ն-
 Նիւ անելով մնացածների գլխին, իբր բռնի,
 դէպ իկորուստ չե՞նք մղում մենք նոցա:
 Հայ հողագործ դասի վիճակը շատ ան-
 նախանձելի է ընդհանրապէս: Նա ստիպուած
 է տաք եղանակում խանձուիլ այրող արե-
 քակի տակ, իսկ ցուրտ եղանակում պատու-
 պարուիլ սորանից շճ դար առաջ Քսենոփոնի
 պատմած խոնաւ գետնափոր որջերի մէջ
 եւ այնտեղ ստանալ իւր պապական ժառան-
 գութիւն ոսկրացաւն ու թոքախտը: Տա-
 բուայ համարեա կէսը պաս լինելով, նա այդ
 միջոցում գրեթէ բացառապէս ցամաք հա-
 ցով եւ բանջարեղէնով է կերակրվում, իսկ
 միւս կէսում, եթէ ունի կթան կով կամ
 գոմէշ կամ այծ ու ոչխարներ, ճաշակում
 է մտծուն, թան ու սպաս, իսկ իւղ ու պան-

րի մի մասը ծախուամ՝ ու միւս մասը հաւ
ու ձուի հետ պահուամ է հիւրերի հետ կամ
աօն օրերին վայելելու համար: Մսի համը նա
միայն Մնունդ—Միրտութեան եւ Յարու-
թեան բոներին է տեսնուամ: դորա համար
էլ հայ գիւղացին թող շնորհակալ լինի
աշխարհի Փրկչից, թէ ո՛չ՝ յաւիտեան զուրկ
պիտի մնար մինց:

Նահապետական, աւանդամոյ եւ նախա-
պաշարեալ հայ գիւղացին մանուկ է, տգէտ
է, կոյր է: Գարեղի միմեանց արագ յաջոր-
դող բուռն հարուածները այնքան ճնշել,
ստրկացրել եւ ապշեցրել են նորան, որ մե-
ռելութեան հաւասար թմրութեան եւ ան-
շարժութեան է ենթարկուել. ամենագորեղ
սթափեցուցիչ դեղեր են հարկաւոր նորան
ուշքի բերելու համար: Արքիմէպեան լծակ-
ներ են հարկաւոր նորան տելահան անե-
լու համար:

Գիւղական կեանքին անծանօթ լինելով
գուցէ գայթակղիք, բարեկամ իմ այս խօսքե-
րից կամ յափազանցութիւն համարէք եւ
կամ հէնց ուղղակի հէգնօրէն բացագան-
չէք: «Վահ՛, թո՛ղ գեանափոր տներուամ չը-
բնակի գիւղացին, եթէ դա վնասուամ է նօ-
րա առողջութեանը, թո՛ղ յաւ ապրի, թո՛ղ
աչքը բաց անի ու շարժի մի փոքր, ո՞վ է

նորա ձեռքը բռնողը:» Այո՛, բայց ո՞վ իւր
աչքը կոյր կուզի. գիւղացին հնար ունեցաւ
ու չարաւ: Զարմա՛նք:

Ո՞րքան, յիրաւի, անմխիթարական բան է
ապրել Կովկասի նման բնութեամբ հարուստ
երկրուամ եւ կրակի գնով առնել ամեն բան:
Գիւղուամ ապրել եւ հաւ ու ձու, կաթ ու
մածուն, պանիր ու կարագ կուշտ չուտել,
քաղաքուամ ապրել՝ համարեա ամեն բանից
զուրկ ապրել: Իհարկ է, մեր խօսքը բաղ-
դաւորների վերայ չէ, նոքա ամեն տեղ էլ
բացառութիւններ են: Միլիօններով բնակիչ
ունեցող Վեննայուամ եւ Փարիզուամ աւելի
աժան եւ վայելուչ կարելի է ապրել քան
Կովկասի մինչեւ անգամ որ եւ է գաւա-
ռական քաղաքուամ: Այն սառնապատ, ճահ-
ճային եւ անբեր Շուէդ—Նորվեգիան եւ Յին-
լանդիան, ուր եթէ մեզ երկաթի շղթանե-
րով իսկ կապէին, մենք մի ժամ անգամ
չէինք դիմանալ: մօտ տասը միլիօն բնակիչ-
ներ են առատօրէն կերակրուամ, մինչդեռ
մեր դրախտավայր Կովկասը հագիւ չմեղք-
նելու չափով է սննդուամ իւր մի քանի մի-
լիօն թշուառ զաւակներին: Խի՞ղճ է այս:

Երեւակայուամ եմ թէ ինչպիսի առաս-
պելական առատութիւն կտիրէր մեր Կով-
կասուամ եւ ի՛նչպիսի դժոխային, սրտաճըմ-

իսկ տխուր տեսարան կբացուէր մռայլապատ Անգլիայում: եթէ այդ երկիրների, Կովկասի եւ Անգլիայի, բնակիչները յանկարծ, մի վայրկեանուով փոփոխէին իւրեանց դերերը: Ա՛յսպէս. դիցուք մեր արգաւանդ Կովկասի 5 միլիօն ծոյլ ու տգէտ բնակիչները: իբր կախարդական գաւազանի հարուածով, յանկարծ դառնային ճիշտ նոյն թուով զարգացած եւ աշխատասէր Անգլիացիներ, իսկ անբեր Անգլիայի 34 միլիօն բնակիչները գառնային դարձեալ ճիշտ նոյն թուով Կովկասցիներ. այն ժամանակ խոպանացած Կովկասը կդառնար Մահմէդի խոստացած արքայութիւնը կամ Մովսէսի հռչակած Աւետեանց երկիրը, ուր մեր խմածը միայն կաթ եւ կերածը մեղր կլինէր: իսկ Անգլիայում կճայթէր մարդկութեան պատմութեան մէջ յսուած գազանային արիւննուշտ կռիւ գոյութեան համար. կշողար ամեն կողմ մահաբեր պողովատը, օր հասական բնակիչները կմորթոտէին զիրար կասաղաբար, արեան հեղեղը կպատէր երկիրը եւ այսօր բուայ ծաղկեալ Անգլիան կդառնար մի սոսկավիթխար տխուր գերեզման:

Բարեկամ, դուք կարդալով այս վերջին տողերը գուցէ վշտանաք եւ ցաւիք իմ մոլորութիւն վերայ ու հերքե-

լով իմ դատապարտելի խաղը 5 միլիօն ազգաբնակութեան հետ եւ մասնաւորապէս մի միլիօն ու կէս Կովկասեան ազգի (հայ) հետ, խիստ կերպով ասէք ինձ. «Պարոն, մի՞թէ կարելի է թոյլ տալ ձեզ մինչեւ անդունդ իջեցնել մի ազգ (հայ), որը այսօր Կովկասի բնիկների մէջ առաջին ազգն է ամեն կողմանէ, որը երկրի գիւլատնտեսութիւնը, արհեստը, վաճառականութիւնը, գործարանները, ուսմունքը եւ քաղաքական հանճարները իւր ձեռքում ու գլխումն է կենտրոնացրել: Բոլորովին ճշմարիտ է, ես ոչինչ չունեմ դորա դէմ ասելու. բայց ի՞նչ մի մեծ պարծանք է, որ հայը կոյրերի մէջ միականի է: Այլ ինչո՞ւ բարեկամ, դուք անպատճառ բնիկների հետ էք համեմատում հային եւ ոչ արեւմտեան ազգերի հետ. հապա բաղդատեցէք նորան Գերմանացու, Ֆրանսիացու, Անգլիացու եւ մինչեւ իսկ փոքրիկ Զուիցերացու, Հոլլոնդացու եւ Բելգիացու հետ եւ դուք կտեսնէք, որ հայը աւելի ստոր է նոցանից, քան քուրդը՝ հայից: Վահ, կասէք, մի՞թէ կարելի է դարերով լուսաւորուող ազգերը բաղդատել դարաւոր քնից նոր զարթած ազգի հետ: Կրպատառխանեմ. հապա ի՞նչ է պատճառը որ Փորթուգալը եւ Հոլլանդան, որ մի ժա-

մանակ ծովային վաճառականութեան մէջ մրցում էին միմեանց հետ ովկիանոսների վերայ եւ մտաւորապէս հաւասար լուսաւորուած ազգեր էին: այսօր առաջինը երկրորդից, այնքան ստոր է, որ դոցա միմեանց հետ համեմատելով մեծ պատիւ արած կլինէինք Փորթուգալին: Հարիւր տարուայ Միացեալ Նահանգները քանի՞ պատիկ աւելիվեր է դարերով լուսաւորուող Իտալիայից Սպանիայից եւ Աւստրո—Հունգարիայից: Ուրեմն, բարեկամ, այդ աւելի կախուած է ազգի ընդունակութիւնիցը եւ աշխատասիրութիւնիցը: Հայը ընդունակ եւ տոկուն—աշխատող ազգ է, նորան շատ է տրուած, ապա ուրեմն եւ շատ կպահանջուի նորանից: Հայի կոչումը Արեւելքում մէծ է եղած եւ է՝. նա յանցաւոր կլինի Աստուծոյ եւ մարդկութեան առաջ, եթէ դաւաճանի իւր բարձր կոչմանը:

Ե.

Մի խօսք եւս, եւ մենք կշօշափենք մեր նպատակին:

Հայ հողագործ դասի վիճակը բարւոքելու հարցը: Եթէ միայն այդպիսի հարց զարթնել է մեզանում (այն եւս գուցէ այս վեր-

ջին սովի պատճառաւ), դա մեր ամենափոքրը ուշադրութեան եւ հոգատարութեան առարկան է եղել: Մինչեւ այսօր ո՛չ ոք չըջմտածեց գիւղատնտեսութեան գէթ այդ կամ այն ճիւղին այս կամ այն բերքի մշակութեան աւելի դիւրին եւ արդիւնաւոր եղանակին յետ ծանօթացնել մեր գիւղական հասարակութիւններին, տարածելով նոցա մէջ այդ ճիւղերի վերաբերեալ ժողովրդեան մատչելի բարբառով եւ գնով գրքոյկներ: Բայց պէտք է նոյնպէս ասած, որ լոկ գրքոյկներ տարածելով էլ չէ կարելի ոչ մի ցանկալի՝ նպատակի կատարելապէս հասնել. նախ՝ որ գիւղացիք, քիչերի բացառութեամբ, անգրագէտ են եւ չեն կարող շահուել նոցանից օրինաւորապէս եւ երկիրորդ՝ որ իւրեանց պտպերի եւ անձնական փորձերը թողած գրքոյկներին կուրօրէն հաւատալ չեն վստահիլ: Նոցա համար անհրաժեշտ է կենդանի օրինակ, որը աչքնեբովը տեսնեն ու ձեռքերովը շօշափեն ու այնպէս հաւատան. եւ ապա թէ սկսեն փոքր առ փոքր վստահանալ եւ ձեռնամուխ լինել անծանօթ բերքի մշակութեանը կամ ծանօթ նիւթի նոր ձեւի մշակութեանը: Այստեղ ահա՛ մարդ զգալի կերպով նկատում է մի հմուտ եւ հզօր առաջնորդող

ձեռքի պակասութիւն. այդ առաջնորդող
ձեռքը կարող է լինել միմիայն լաւ կազ-
մակերպուած ԳԻՒՂԱՏՆՏՅՍԱԿԱՆ ԸՆԿԵ-
ՐՈՒԹԻՒՆԸ:

Ձ.

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Բարեկամ, քանի ընթերցող ունի գրքոյ-
կրս, այնքան բարեկամ եւ բարեկամուհի ու-
նի նորա համեստ հեղինակը, որը մեծ յոյս
ունի թէ իւր բարեկասները որ կարդումեն
այս վերջին տողերը՝ չեն զլանալ նաեւ գէթ
մի հարեւանցի հայեացքի արժանացնել ներ-
քեւ գրուած նորա Հայոց գիւղատնտեսական
ընկերութեան կանոնադրութեան համար Թիֆլի-
քը: Այսպիսի մի մեծ հիմնարկութեան համար
կանոնադրութիւն ծրագրելը անչափ վեր է մեր
տկար ոյժիցը եւ կատարեալ յանդգնութիւն-
բայց մենք ո՛չ եթէ կանոնադրութիւն, այլ
սոսկ մի անշունչ կմախք ենք ներկայացնում
այս գործով հետաքրքրուող մեր ապագայ ըն-
կերներին, որպէս զի նոքա, եթէ հնար է,
այս 1882 թիւ ամառը գումարուելով Թիֆ-
լիսում, օրինաւոր խմբագրութեամբ կեանք
ներշնչեն այդ կմախքին եւ առաջարկեն մեր
բարեխնամ տէրութեանը հաստատելու հա-
մար: Կխնդրէի իմ բարեկամներից աւելի

հետաքրքրուողներին՝ նեղութիւն յանձն առ-
նուլ իւրեանց բնական քաղաքում եւ գիւ-
ղում ցուցակագրել ընկերանալ ցանկացող-
ների անունները եւ յուղարկել ինձ հետեւ-
եալ հասցէով «Въ Тифлисъ Д. Каланта-
рянцу, Вельяминовская ул. домъ Егиазаро-
ва № 30.» Իսկ այդ մասին կայանալիք ժո-
ղովի եւ կանոնադրութեան խմբագրուելուն
աւելի՛ դիւրութեան համար, կազմել մի քա-
նի անգամ տեղական նախապատրաստական
ժողովներ եւ որոշեալ ժամանակին (որի
մասին կյայտարարուի հայ լրագրերի մէջ)
ուղեւորել Թիֆլիս ամեն գաւառական քա-
ղաքից մի մի պատգամաւոր նոյն գաւառի
ընկերացողների կողմից ընտրուած ընդհա-
նուր ժողով կազմելու համար: Ընկերաբա-
ժինը առ այժմ մեր կողմից նշանակեցինք
50 բուբլ, որպէս զի մարտի 15-ին ժողովը
բնական Բայոյ Գասախարգիին ևս, մանաւանդ
վերջին աստիճանի անապահով ապագայ
ունեցող մեր ազգային հոգեւոր դպրոցների
ուսուցիչներին, որոց համար դա կարող էր
դառնալ ապագայում ցուպ ծերութեան,
մի տեսակ պէնսիա:

Մենք մեր կողմից առայժմ գրվում ենք
10 ընկերաբաժին, այն է 500 բուբլ:

Բ. ԱՆԴԱՄՆԵՐ

§ 2. Անդամները պէտք է լինին չափա-
հաս, այն է 21 տարին լրացրած, հայեր, ա-
ռանց խտրութեան սեռի, դաւանութեան,
ինչ ազգի հպնտակ լինելուն, անորոշ թու-
ով եւ մշտնջենաւոր:

§ 3. Իւրաքանչիւր անդամ իրաւունք
ունի որոշեալ ժամանակամիջոցներումը ըս-
տանալ ընկերութիւնից իւր դրած ընկերա-
բաժինների համապատասխան շահը:

§ 4. Ընկերութեան գործոց վերաբերեալ
ընդհանուր ձայնատուութեան մեջ ըլլոր ան-
դամներն եւս ձայնի հաւասար իրաւունք
են վայելում: Թէ եւ նոցանից մէկը 1000,
իսկ միւսը միայն մի ընկերաբաժին մտցրած
լինի ընկերութեան մէջ:

§ 5. Ընկերութիւնից որպիսի եւ է պատ-
ճառով հրաժարուող անդամը զրկվում է
իւր դրած ընկերաբաժիններից. իսկ մեռնող
անդամի իրաւունքը նոյնութեամբ փոխան-
ցվում է նորա ժառանգներին կամ ում նա
ըստ օրինի կտակած կլինի: Սակայն եթէ
օտարազգու կտակած լինի այդպիսին չէ կա-
բող համաձայն սոյն կանոնադրութեան § 2,
ընդունվիլ անդամ: իսկ կտակողի ընկերա-
բաժինները կմնան յօգուտ ընկերութեան:

§ 6. Անդամները, ըստ գործունէութեան,
լինում են գործող անդամներ եւ չեղոր ան-
դամներ: Գործող անդամներն են պատգա-
մաւորաց ժողովի, կենտրոնական գործադիր
ժողովի եւ ճիւղերի ժողովների անդամնե-
րը: իսկ չեղոր անդամները նորա են, որք
չեն խառնվում ընկերութեան գործունէու-
թեան մէջ:

Գ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ

§ 7. Իւրաքանչիւր գաւառի անդամները,
գումարուելով նոյն գաւառի գաւառական
քաղաքը, գաղտնի քուէարկութեամբ ընտ-
րում են մի մի ներկայացուցիչ, որը կոչ-
վում է նոյն գաւառի պատգամաւոր, նոյն-
պէս եւ մի մի տեղակալ:

§ 8. Պատգամաւորները եւ տեղակալները
ընտրվում են հինգ տարի ժամանակով:
Նորա պէտք է լինին անպատճառ ուսեա-
հպատակ:

§ 9. Պատգամաւորները չեն ստանում
ընկերութիւնից ուժիկ իւրեանց աշխատու-
թեանց համար, միայն իրաւունք ունին ըս-
տանալ ընկերութեան գործի պատճառով
իւրեանց արած ճանապարհածախքը:

§ 10 Յարուայ որ ժամանակն եւ ընտրուելու լինի պատգամաւորը՝ այդ միեւնոյն է, միայն նորա պաշտօնավարութեան սկզբնաւորութիւնը հաշուելու է առաջիկայ Յունվար 1-ից մինչեւ ուղիղ 5 տարի՝ թէ եւ մինչեւ նոյն Յունվար 1-ը նա վայելում է պատգամաւորի լիակատար իրաւունքը:

Դ. ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱՅ ԺՈՂՈՎ

§ 11. Պատգամաւորաց ժողովը կազմվում է պատգամաւորներից, որոց թիւը չէ որոշուած:

§ 12. Պատգամաւորաց ժողովը է ընկերութիւն ներկայացնող մարմինը՝ որը ունի լիազօր իրաւունք ըստ իւր բարենկատողութեան տնօրինել ընկերութեան բոլոր գործերը:

§ 13. Պատգամաւորաց ժողովը պատասխանատու է ընկերութեան առաջ նորա կանխիկ գրամի շահեցողութեան, շարժական եւ անշարժ գոյքի անկորուստ պահպանութեան եւ կենտրոնական գործադիր ժողովի եւ նորա ճիւղերի արգիւնաւոր գործունէութեան համար:

§ 41 Պատգամաւորաց ժողովը կայանում է

տարին մի անգամ ընկերութեան կենտրոնատեղում Դեկտեմբեր 15-ից մինչեւ նոյն ամսոյ 31-ն ամենայն օր, օրական 5 ժամ տեւողութեամբ: Իւրաքանչիւր տարեկան ժողովը կառավարելու համար ընտրվում է նոր նախագահ:

§ 15. Պատգամաւորաց ժողովը իրաւունք ունի ներկայ անդամոց $\frac{2}{3}$ -ի համաձայնութեամբը վճռել ընկերութեան վերաբերեալ ամենայն հարց:

§ 16. Պատգամաւորաց ժողովն է գնումս վաճառում, կապալաւ վերցնում եւ տալիս ընկերութեան կալուածները: Պատգամաւորաց ժողովն է նշանակում մասնագէտ գիւղատնտեսների ցուցմամբ ընկերութեան կենտրոնատեղին, նա է ընտրում գաղտնի քուէարկութեամբ կենտոնական գործադիր ժողովի եւ նորա ճիւղերի անդամները եւ օգնականները, որք պէտք է կամ պատգամաւորաց ժողովի եւ կամ ընկերութեան չեզոք անդամներիցը լինին, եւ այն՝ մասնագէտներ կամ գիւղատնտեսութեամբ ցվերին աստիճան հետաքրքրուող զարգացած անձինք, նա է որոշում կենտրոնական գործադիր ժողովի եւ նորա ճիւղերի անդամոց եւ օգնականների ռոճիկները, նա է կազմում ընկերութեան ծախուց տարեկան նա-

խահաշիւը, նա է, վերջապէս, քննում եւ փակում կենտրոնական գործադիր ժողովի եւ նորա ճիւղերի տարեկան հաշիւները:

§ 17. Պատգամաւորաց ժողովը իւր պաշտօնավարութեան պայմանաժամը լրանալուց 3 ամիս առաջ լրագրութեանց միջոցաւ յայտարարում է իգիտութիւն ընկերութեան բոլոր անդամներին, որ շտապէն ընտրել եւ ժամանակին յուղարկել կենտրոնատեղին նոր պատգամաւորներ, ինչպէս պատգամաւորաց ժողովից ընկերութեան բոլոր հաշիւներն ստանալու համար, նոյնպէս եւ կենտրոնակ ն գործադիր ժողովի եւ նորա ճիւղերի համար նոր գործող անդամներ ընտրելու համար:

Ե. Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Տ Ե Ղ Ի

Ե Ի Ն Ո Ր Ա Ճ Ի Ի Ղ Ե Ր Ը

§ 18. Կենտրոնատեղի կոչվում է գիւղատնտեսական ընկերութեան գործնական պարապմունքի գլխաւոր տեղը, որը պէտք է լինի Ռուսահայքում:

§ 19. Կենտրոնատեղին պատգամաւորաց ժողովի վճռով կարող է տեղափոխուիլ բայց ոչ երբէք Ռուսահայքի սահմանից դուրս:

§ 20. Կենտրոնատեղին կարող է ունենալ իւր ճիւղերն անորոշ թուով, եւ այն ոչ եթէ միայն Ռուսահայքում այլ եւ Պարսկահայքում եւ Տաճկահայքում: Միայն այդ երկու տէրութեանց միջի ճիւղերն, յորոց յարմարագոյնը կկրի մասնաոր կէտքանարկեանունը, պէտք է կառավարուին նոյն պետութեանց հպատակ անդամներից կազմուած մասնաոր պարագամաւորաց ժողովներով, որոց անունով կլինեն ըստ օրինի հաստատուած նոյն ճիւղերի ընկերական բոլոր կալուածքները:

§ 21. Ինչպէս Ռուսահայքում այնպէս եւ յիշեալ երկու պետութեանց մէջ գտանուող ճիւղերն եւ մասնաւոր կենտրոնատեղիներն պէտք է կառավարուին համաձայն ներկայ կանոնադրութեան եւ կապակցուած լինին Կենտրոնատեղու հետ որպէս երակներ սրտի Հետ. այն է, պարտին անպայման հնազանդել պատգամաւորաց ժողովի բոլոր վճիռներին եւ ընթանալ համաձայն կարգադրութեանց կենտրոնական գործադիր ժողովի:

§ 22. Տաճկահայքի եւ Պարսկահայքի ճիւղերի կալուածքները գնուած լինելով ընկերութեան դրամով, նոյն ճիւղերի մասնաւոր պատգամաւորաց ժողովները պարտաւոր են ապահովութեան համար տալ Ռուսահայքի

պատգամաւորաց ժողովին նոյն կայուած-
ները կրկին արժողութեան գումարները
մուրհակներ:

§ 23. Ճիւղերն ունենալու են նոյն կազ-
մակերպութիւնը, որը ունի կենտրոնատե-
ղին. միայն գիւղատնտեսական պարապման
ճիւղերի տեսակներովն ու թուովն կարող
են տարբերուիլ միմիանցից ինչպէս ճիւ-
ղերն Կենտրոնատեղից, այնպէս եւ ճիւղերն
ճիւղերից:

2. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ

ԵՒ ՆՈՐԱ ԻՒՆԻՎԵՐՍԻՒՄ ԵՒ ՆՈՐԱ ՄԱՐԿԵՏԻՆԻ
ՆԱԿԱՆՆԵՐԸ

§ 24. Ընկերութեան գիւղատնտեսական
պարապմունքը յառաջ վարելու համար ըն-
տրովում են գործող անդամներ եւ օգնական-
ներ:

§ 25. Թէ՛ Կենտրոնական գործադիր ժո-
ղովի եւ թէ՛ Ռուսահայքում գտնուող ճիւ-
ղերի գործող անդամները եւ օգնականնե-
րը պէտք է անպատճառ ռուսահայտակ
լինին. Իսկ Տաճկահայքի եւ Պարսկայքի
ճիւղերի գործող անդամները եւ օգնական-
ները կարող են լինել օտարահայտակ հայ-

յեր: Սոցա ընտրում են նոյն պետութեանց
մէջ գտանուող մասնաւոր պատգամաւորաց
ժողովները եւ հաստատում են Ռուսա-
հայքի պատգամաւորաց ժողովից:

§ 26. Կենտրոնական գործադիր ժողովի
եւ բոլոր ճիւղերի անդամները եւ օգնական-
ները ընտրվում են 5 տարի ժամանակով:
Սոցա պաշտօնի սկիզբը, ինչպէս պատգա-
մաւորներինը, պէտք է հաշուած ընտրուած
տարուայ առաջիկայ Յունվար 1-ից սկսեալ
մինչեւ ուղիղ 5 տարի:

§ 27. Կենտրոնատեղու եւ ճիւղերի գործող
անդամները եւ օգնականները պէտք է պա-
րապէս գործնական գիւղատնտեսութեամբ,
նոքա իւրեանց պաշտօնավարութեան բոլոր
ժամանակը պարտաւոր են իւրեանց բոլոր
բարոյական, մտաւոր եւ ֆիզիքական ոյժերը
միանգամ ընտրած ճիւղին նուիրել, մաս-
նագիտաբար մշակել զայն եւ անընդհատ
գործնական փորձերով կատարելագործել նո-
րա մշակման եղանակը:

§ 28. Կենտրոնական գործադիր ժողովի
անդամների թիւը լինելու է ընդ ամեն
24, որոնցից՝

Ա. Նախագահ.

Բ. Ատենադպիր.

Գ. Գանձապետ.

- Դ. Հաշուապահ.
- Ե. Խորհրդատու անդամ.
- Զ. Տնօրէն կալուածոց.
- Է. Տնօրէն դպրոցների.
- Ը. Տնօրէն՝ դաղթականաց
- Թ. Մշակող հացաբոյսերի (ցորեն, գարի, հաճար կորէկ, բրինձ եւայլն նոյպէս եւ շաքարեղեգն)
- ժԱ. Մշակող բանջարանոցի (սեխ, ձմերուկ, վարունգ, դդում, կաղամբ, սիսեռ լոբի ոսպ, բակլայ եւայլն)
- ժԲ. « Ծաղկանոցի (վարդի իւզ, անանուխի իւզ, աֆիոն եւայլն):
- ժԳ. « Ծխախոտի, բամբակի, կտաւատի, կանեփի (ձէթ, վուշ եւայլն).
- ժԴ. « Թփանոցի (կաղին, շաքանակ, նուռըն, թուզ լիմոն, նարինջ, ձիթենի եւայլն)
- ժԵ. « Այգիի (գինեհանութիւն, չամիչ, գինևոյ ոգի)
- ժԶ. « Թթուաքի (օղեհանութիւն, չոր թութ, ուռփ)
- ժԷ. « Պարտեզի (ամենատեսակ թաց եւ չոր միրգեր, քաղցրաւենիք, շաքարամիրգ)
- ժԸ. « Արհեստական անտառների (անտառային ընտիր ծառեր)

- ժԹ. Շերամապահ
- Ի. Միլոուապահ
- ԻԱ. Թռչնապահ.
- ԻԲ. Անասնապահ
- ԻԳ. Գրաստապահ
- ժԴ. Խոզապահ *)

§ 29. Իւրաքանչիւր գործող անդամին, նայելով նորա գործի ընդարձակութեանը, աջակցում են մի մի, երկուքական, երեքական եւայլն առաջին կարգի, երկրորդ եւ երրորդ կարգի օգնականներ: Ճիւղերի գործող անդամների եւ նոցա օգնականների թիւը կարող է, նայելով պարապման ճիւղերի թուին, պակաս լինել կենդրոնականից:

§ 30. Կենտրոնական գործադիր ժողովի եւ ճիւղերի ժողովոց անդամները եւ օգնականները իրաւունք ունին ձրիաբար կերակրուել ընկերութեան հաշուով պատրաստուող ընդհանուր սեղանից:

§ 31. Կենտրոնական եւ ճիւղերի ժողովոց անդամները եւ օգնականները իվարձ իւրեանց աշխատութեան ստանում են, իւ-

*) Այդ բոլոր ճիւղերին, կարծում ենք կարող են մտաւորապէս համապատասխան լինել Ուտէացւոց աշխարհը, Մուղանի դաշտը, Արմիայի գաւառը Մշոյ դաշտը Տիգրանակերտը եւ մանաւանդ Կիլիկիան:

րաքանչիւր ոք ըստ արժանաւորութեան,
առաւել կամ նուազ չափով ռոճիկներ:

Է. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ.

ԵՒ ՃԻՒՂԵՐԻ ԺՈՂՈՎՆԵՐ.

§ 32. Կենտրոնական գործադիր ժողովը
կազմվում է գործող անդամներից, որոց թիւն
է 24. Իսկ ճիւղերի ժողովները՝ ճիւղերի
գործող անդամներից, որոց թիւը կինի
այնքան՝ որքան պարապման մասեր ունի
այս կամ այն ճիւղը:

§ 33. Կենտրոնական գործադիր ժողովն
է ընկերութեան ներքին կեանքի գլխաւոր
շարժիչ երակը, որը ղեկավարում է ինչպէս
կենտրոնի նոյնպէս եւ բոլոր ճիւղերի մտա-
ւոր եւ ֆիզիքական գիւղատնտեսական պա-
րապմունքը, որոց արդիւնաւոր հետեւանքի
մասին պատասխանատու է պաագամաւո-
րաց ժողովի առաջ:

§ 34. Կենտրոնական ժողովի իւրա-
քանչիւր անդամը պէտք է ունենայ իւր ա-
ռանձին դիւանը, ուր նա առանձին մա-
տեաններում պիտի արձանագրի իւր պա-
րապման ճիւղի վերաբերեալ արած փոր-
ձերը եւ նոցանից ստացած հետեւանքները:

Փորձերի յաջող հետեւանքների մասին ժա-
մանակին պէտք է յայտնի ժողովին, որը
եթէ գտնի շահաւէտ, կվճռի նորա գործա-
դրութիւնը:

§ 35. Ժողովի նիստերը կայանում են
շաբաթը մի անգամ անխափան, շաբաթ
օրերը զկին կէս աւուր 3 ժամ տեւողու-
թեամբ: Ժողովից բացակայ անդամի ձայնը
փոխանցվում է նորա առաջին կարգի օգ-
նականին, իսկ այս վերջինի եւս բացակա-
յութեանը ժամանակ՝ երկրորդ կարգի օգ-
նականին եւայլն:

§ 36. Գործադիր ժողովի ղեղավորները
կլինի քննութեան ենթարկել թէ՛ կենտրո-
նի եւ թէ՛ ճիւղերի գիւղատնտեսական պա-
րապմանց վերաբերեալ բոլոր հարցերը, վրձ-
ուել զայնս եւ հսկել նոցա անթերի գործա-
դրութեանը վերայ: Հարցերը վիշտ վճռու-
վում են բոլոր անդամոց $\frac{2}{3}$ մասի համա-
ձանութեամբ:—

§ 37. Օգնականները իրաւունք ունին,
ներկայ գտանուել ժողովոյ նիստերին, որ-
պէս ուկնդիրներ: Միայն խիստ կնճռոտ
հարցերում նախագահը կարող է ձայնի ի-
րաւունք տալ առաջին կարգի օգնական-
ներին:

§ 38. Ճիւղերի ժողովները իրաւունք ու-

նին առաջարկել կենտրոնական ժողովին իւրեանց արած փորձերի յաջող հետեւանքները, բայց իրաւունք չունին գործադրել նոցա՝ մինչեւ չստանան կենտրոնական ժողովից այդ մասին պաշտօնապէս թոյլտուութիւն։ Սոքա պարտաւոր են նաեւ ամեն տարի Դեկտեմբեր 15-ին ներկայացնել Կենտրոնական ժողովին իւրեանց տարեկան գործունէութեան օրինաւոր հաշիւը։ Ճիւղերի ժողովների ներքին կազմակերպութիւնը թեւեւ բոլորովիւ նման է կենտրոնականին, միայն նոցա իրաւանց սահմանը խիստ ամփոփուած է եւ անմիջապէս կախուած են այդ վերջինից։

§ 39. Կենտրոնական գործադիր ժողովը պատասխանատու է պատգամաւորաց ժողովի առաջ, եթէ արած լինի մի որ եւ է զեղծում նորա կազմած նախահաշուի դէմ։ Նա պարտաւոր է նոյնպէս ներկայացնել պատգամաւորաց ժողովին թէ՛ իւր եւ թէ՛ բոլոր ճիւղերի տարեկան գործունէութեան օրինաւոր հաշիւները, ճիշտ Դեկտեմբեր 15-ին։

Ը. ՉԵԶՈՒՔ ԱՆԴԱՄՆԵՐ:

§ 40. Չեզոք անդամները (§ 6) իրաւունք ունին առաջարկել բերանացի կամ գրաւոր կերպով Կենտրոնական գործադիր ժողովին իւրեանց փորձով օգտակար իմացած գիւղատնտեսութեան վերաբերեալ առաջարկներ։ Դորա համար ամենայն այդպիսի առաջարկներ ուղղելու է Գործադիր ժողովի խորհրդատու անդամին, որը եւ կառաջարկի ժողովի քննութեանը։

Թ. ԸՆԿԵՐԱԲԱԺԻՆ:

§ 41. Ընկերաբաժինը նշանակւում է ճիշդ Յունուար 1-ին միանուագ կանխիկ վճարելի 50 բուբլ, որի համար վճարողը կոտանայ պատգամաւորաց ժողովից առանձին ընկերակցադր։ Յանկացողը ազատ է սակայն մտցնել ըկերութեան մէջ քանի բաժին եւ կամենայ։

§ 42. Յունուար 1-ից առաջ մտցրած ընկերաբաժինների տոկոսը դարձնւում է յօգուտ ընկերութեան. եւ ոչ թէ յօգուտ ընկերաբաժիններ մտցնողի։

§ 43. Ընկերութեան գործունէութեան

երկրորդ տարումը ընկերաբաժին մտցնողը պէտք է վճարի ո՛չ եթէ միայն նոյն սկզբնական 50 րուբլը, այլ եւ այն զուտ ընկերակցաշահը (գիւրգէնտ) որը նախնիքաց տարումը աւելացել է նոյն հիմնական 50 րուբլոյ վերայ: Այսպէս հաշուելու է եւ յաջորդ տարիներին: Թէ՛ այդ նպատակի եւ թէ՛ առհասարակ ընկերութեան բոլոր անդամների տեղեկութեանը համար՝ ամեն տարի հրատարակվում է ընկերութեան հաշուով սորա տարեկան գործունէութեան համառօտ հաշիւը:

ԸՆԿԵՐԱԿՑԱՇԱՀ

ԵՒ ՆՈՐԱ ԲԱՇԽՈՒՄԸ:

§ 44. Ընկերութեան գործունէութիւնից ձեռք բերուած զուտ շահը մնում է պատգամաւորաց ժողովի տնօրէնութեան ներքոյ անձեռնմխելի ուղիղ 5 տարի, այն է՝ մինչեւ ընկերութեան բոլոր գործող մարմինների լուծուելու օրը:

§ 45. Իւրաքանչիւր 5 տարին լրացնելուց ընկերութեան զուտ շահը բաժանվում է 5 հաւասար մասերի հետեւեալ կերպով: Ա. Առաջին մասը աւելացնվում է ընկերութեան դրամագլխի վերայ:

Բ. Երկրորդ մասովը գնվում են նոր կառուածքներ ընկերութեան համար:

Գ. Երրորդ մասը բաժանվում է ընկերութեան բոլոր անդամների վերայ համեմատ նոցա մտցրած ընկերաբաժիններին:

Դ. Չորրորդ մասը գործադրվում է ընկերութեան կալուածոց մէջ գտնուող հայոց հոգեւոր երկսեռ դպրոցներում ձրի եւ պարտադիր ուսումն եւ տեսական ու գործնական գիւղատնտեսութիւն սովորեցնելու համար:

Ե. Հինգերորդ մասը գործ է դրվում հեռու աշխարհներ ցրուած հայերին՝ ընկերութեան կալուածքները վերագաղթելու հնարաւոր դիւրութիւնները ընձեռելու համար:

§ 46. Եթէ ընկերութեան դրամագլուխը որպիսի եւ է պատճառով պակասած լինի, նախ պէտք է նորա պակասորդը լրացնել եւ ապա մնացորդը տնօրինել համաձայն § 45 կէտերին:

ԺԱ. ԸՆԿԵՐՈՒԹԻԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ ՍԿԻՋՐԸ:

§ 47. Ընկերութիւնը ձեռնամուխ կլինի գործունէութեան այն ժամանակ, երբ նա

կունենայ առնուազն 1000 ընկերաբաժին,
այն է՝ 50000 բուբլ գրամագլուխ: Բայց
որովհետեւ այդպիսի մի աննշան գումարով
հնարաւոր չէ՝ § 28 յիշուած բոլոր պարապ-
ման ճիւղերին եւս ձեռնամուխ լինել, ուս-
տի պէտք է սկսել նախ այն ճիւղերն, որք
աւելի նպատակայարմար, շահաւոր եւ մի-
անգամայն մատչելի են ընկերութեան փոք-
րիկ ոյժերին:

ԺԲ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽԱՓԱՆՈՒՄԸ:

§ 48. Եթէ ընկերութիւնը երբեւիցէ խա-
փանուելու լինի, նորա բոլոր թէ շարժա-
կան եւ թէ անշարժ գոյքը պէտք է դառ-
նայ սուրբ էջմիածնայ վանքի սեպհականու-
թիւն:



«Ազգային գրադարան»



NL0248778

